ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0145 Ա. 30.09.21

30 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 145 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Մարտին Գալստյան**
2021 թ. հոկտեմբերի 1
Երևան

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2021 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 145 Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[1]

1. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կատարման գործընթացը[2]

2020 թվականի տնտեսական խորը անկումից հետո 2021 թվականին թե՛ համաշխարհային և թե՛ Հայաստանի տնտեսության զարգացումներում արձանագրվեցին սպասվածից ավելի դրական միտումներ: Վերջինս արտահայտվեց տնտեսական ակտիվության և համախառն պահանջարկի ավելի արագ վերականգման տեմպերով՝ պայմանավորված մի կողմից աշխարհում պատվաստանյութերի կիրառման արդյունքում կորոնավիրուսի համավարակի հաղթահարման դրական սպասումներով և մյուս կողմից իրականացվող զգալի խթանող քաղաքականությունների ազդեցությամբ: Գնահատվում է, որ տնտեսական ակտիվության և համախառն պահանջարկի արձանագրվող արագ վերականգնման միտումները կշարունակվեն նաև առաջիկա եռամսյակներում և տարվա արդյունքում ՀՀ տնտեսական աճը, ըստ Ֆինանսների նախարարության գնահատականների, կկազմի շուրջ 6.5 տոկոս:

Առաջարկի տեսանկյունից, տնտեսական ակտիվության արագ վերականգնումը կպայմանավորվի հիմնականում ծառայությունների և գյուղատնտեսության ճյուղերում առավել բարձր աճերի ձևավորմամբ: Իսկ համախառն պահանջարկի վերականգնումն արտահայտվում է հիմնականում մասնավոր սպառման առաջանցիկ աճի միտումներում, մինչդեռ ներդրումային ակտիվությունը, աշխարհաքաղաքական անորոշությունների պահպանման պայմաններում շարունակում է մնալ զսպված: Մասնավոր սպառման աճի արագացմանը նպաստում են արտերկրից դրամական փոխանցումների մեծ ծավալները և հասարակության՝ կուտակված խնայողությունների նվազումը: Ակնկալվում է, որ նշված միտումները կպահպանվեն առաջիկա եռամսյակներում և

---

[1] ՀՀ կենտրոնական բանկը պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացության կազմման աշխատանքներում առաջնորդվում է բյուջեի ծրագրի՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովման, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածության և դիրքի, երկարաժամկետ աճին նպաստելու և այլ սկզբունքների ներքո գնահատականների ներկայացմամբ:

[2] Սույն փաստաթղթում ներկայացված թվային տվյալները և գնահատականները վերցված են «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծից:

մասնավոր սպառումը կհանդիսանա 2021 թվականի տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը:

2021 թվականին, համաշխարհային և ներքին տնտեսությունների վերականգնման դրական միտումներն արտահայտվել են նաև արտահանման և ներմուծման վարքագծերում: Արտաքին պահանջարկի և զբոսաշրջության արտահանման դրական զարգացումներ, ինչպես նաև առևտրի պայմանների բարելավումը արտացոլվում է ապրանքների և ծառայությունների արտահանման առաջանցիկ ցուցանիշներում, մինչդեռ մասնավոր սպառման աճը մասնակիորեն է արտահայտվում ներմուծման ավելացման ցուցանիշներում: Նշված զարգացումների արդյունքում ակնկալվում է, որ 2021 թվականի ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշի մասով որոշակի բարելավում կարձանագրվի:

Առաջնորդվելով պարտքի բեռի աճը կայունացնելու և միաժամանակ տնտեսության վերականգնումը չխաթարելու սկզբունքով՝ 2021 թվականի հարկաբյուջետային քաղաքականության ընթացքն ուղեկցվել է սահուն կոնսոլիդացիայի ճանապարհով հակացիկլիկ քաղաքականության իրականացմամբ: Այսպես, 2021 թվականի տնտեսական զարգացումների վերը նշված դրական միտումների պայմաններում ընթացիկ ժամանակահատվածում հարկերի հավաքագրման փաստացի մակարդակը պարբերաբար գերազանցել է ծրագրված ցուցանիշներին: Արդյունքում ակնկալվում է, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2021 թվականին կկազմի 22.5%՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 0.1 տոկոսային կետով՝ համախառն պահանջարկի վրա ունենալով զսպող ազդեցություն:

Շարունակելով հակաճգնաժամային միջոցառումների և Արցախյան պատերազմի հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի իրականացումը, 2021 թվականին դիտարկվում է պետական բյուջեի ծախսերի աճ: Այդուհանդերձ, տարվա ընթացքում ծախսերի կատարումն ուղեկցվել է ծախսերի ծրագրային ցուցանիշների պարբերական վերանայումներով և ճշտված ծրագրի նկատմամբ տնտեսումներով, որոնց մեծ մասը բաժին է ընկել արտաքին աջակցությամբ իրականացվող կապիտալ ծախսերին:

Կապիտալ ծախսերի մասով՝ թեև նախորդ տարվա ցածր մակարդակի համեմատ աճ է արձանագրվել, սակայն այն, ինչպես վերջին մի քանի տարիներին, դեռևս զիջում է ծրագրված մակարդակին և միայն տարեվերջի համար ակնկալվող զգալի կապիտալ ծախսերի իրականացման դեպքում 2021թ-ի համար էական թերակատարում չի արձանագրվի: Նման իրավիճակում անվանական ՀՆԱ-ի արձանագրվող բարձր մակարդակի պայմաններում, տարվա արդյունքում ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կնվազի 2.4 տոկոսային կետով (կկազմի՝ 28.2%): Արդյունքում, 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա կունենան զսպող ազդեցություն:

2021 թվականի համար գնահատվում է, որ ակնկալվող ծախսերի նկատմամբ հարկերի առաջանցիկ աճի պայմաններում, ՀՀ պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա համեմատ կնվազի և կկազմի 329.1 մլրդ դրամ՝ զիջելով ծրագրվածին: Միևնույն ժամանակ, ՀՆԱ անվանական մակարդակի սպասվածից բարձր արձանագրվելու պարագայում պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականին կնվազի 0.7 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 4.7%-ը: Արդյունքում, ընդհանուր առմամբ հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա հիմնականում զսպող ազդեցություն:

Թեև 2021 թվականին հարկաբյուջետային քաղաքականության իրականացման համար ուղենշային է եղել գործող հարկաբյուջետային կանոնով սահմանված բացառիկ դեպքի կիրառումը, ակնկալվում է, որ ՀՀ պետական պարտքը ՀՆԱ-ում կնվազի 2.7 տոկոսային կետով և կձևավորվի ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրով նախատեսված ցուցանիշից ցածր՝ 60.8% մակարդակում:

2021 թվականին արտաքին հատվածից փոխանցված գնաճային ազդեցությունների և ՀՀ տնտեսությունում մասնավոր սպառման՝ արտադրական կարողությունների ընդլայնման նկատմամբ առաջանցիկ աճի պայմաններում գնաճն արագացել է՝ գերազանցելով նպատակային ցուցանիշը: Հետևողական լինելով նշված գործոնների պայմաններում առաջանցիկ պահանջարկի կարգավորման, գնաճի զսպման, գնաճային սպասումների խարսխման և միջնաժամկետ հորիզոնում գնաճի նպատակի ապահովման ուղղությամբ քաղաքականության իրականացմանը, գնաճի ու գնաճային սպասումների ավելացման ռիսկերի չեզոքացմանը՝ ՀՀ կենտրոնական բանկը տարեսկզբից մինչև սեպտեմբեր աստիճանաբար կրճատել է խթանող դրամավարկային դիրքը՝ ընդհանուր առմամբ բարձրացնելով քաղաքականության տոկոսադրույքը 2.0 տոկոսային կետով:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ տնտեսության ներուժի ավելացմանն ուղղված ՀՀ կառավարության հնգամյա ծրագրով նպատակադրված տնտեսական թիրախների ներքո և սպասվող արտաքին տնտեսական բարենպաստ զարգացումների պայմաններում, 2022 թվականի համար նախանշվել է տնտեսական աճի 7.0 տոկոս ցուցանիշ: Ընդհանուր առմամբ, 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագիրը բավականին հավակնոտ է և Կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրի համեմատ ենթադրում է

տնտեսական աճի և ներուժի էական արագացում: 2022 թվականի համար նախանշված բարձր տնտեսական աճի հիմքում ընկած են մեծածավալ պետական ներդրումների իրականացումը ենթակառուցվածքներում և մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ոլորտներում, ինչպես նաև տնտեսության արտահանելի հատվածի խթանմանն ուղղված միջոցառումները, որոնք կնպաստեն երկրի մրցունակության և ընդհանուր արտադրողականության բարձրացմանը:

Տնտեսական աճի կանխատեսված արագացումը կդրսևորվի տնտեսության բոլոր ճյուղերում, սակայն աճին ավելի մեծ չափով կնպաստեն արդյունաբերության և շինարարության ճյուղերը: Վերջինս մեծապես կախված կլինի ՀՀ կառավարության կողմից ենթակառուցվածքներում խոշոր պետական ներդրումների ծրագրված համամասնությունների ապահովումից, ինչպես նաև արտաքին աշխարհում սպասվող դրական զարգացումների ընթացքից: 2022 թվականին կշարունակվի համախառն պահանջարկի արագ վերականգնումը՝ պայմանավորված թե' ներքին և թե' արտաքին պահանջարկի աճերով: Ընդ որում, ի տարբերություն 2021 թվականի, ներքին պահանջարկի աճը դիտարկվող ժամանակահատվածում պայմանավորված կլինի Կառավարության կողմից ներդրումների խթանման քաղաքականության ներքո թե՛ մասնավոր, թե՛ պետական ներդրումների բարձր աճերով: Այսպիսով, պետական բյուջեի նախագծով կանխատեսվող տնտեսության ներուժի վերականգնումը էապես կախված կլինի ներդրումների բարձր աճի ապահովումից, այդ թվում՝ պետական բյուջեի կապիտալ ծախսերի՝ սահմանված ժամկետներում և նախատեսված ծավալներով իրականացումից: Մյուս կողմից պետական կապիտալ ծախսերին զուգահեռ նախանշվող տնտեսական աճին մասնավոր ներդրումների էական նպաստման պայմաններում կարևորում ենք ներդրումների խրախուսման և արտահանման խթանման ուղղությամբ նախատեսված միջոցառումների և գործողությունների հստակ նկարագրումն ու քննարկումը բյուջեի ծրագրի շրջանակներում:

Արտաքին հատվածի զարգացումները պայմանավորված կլինեն ներքին և արտաքին պահանջարկի, ինչպես նաև տնտեսական ակտիվության արագացմամբ: Արդյունքում, արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության ներքո 2022 թվականին կաճի և՛ արտահանումը, և՛ ներմուծումը: Սակայն ՀՀ կառավարության կողմից պետական ներդրումների իրականացման և մասնավոր ներդրումների խթանման արդյունքում ակնկալվող ներդրումային բնույթի ապրանքների ներմուծման աճի հաշվին ընթացիկ հաշվի պակասուրդը 2022 թվականին որոշակի կխորանա:

Հարկաբյուջետային քաղաքականությունը, 2022 թվականին կշարունակի սահուն կոնսոլիդացիայի իրականացումը՝ այն համադրելով տնտեսական աճի խթանմանն ուղղված պետական ներդրումների էական մեծացման և ծախսերի

արդյունավետության բարձրացման քաղաքականությամբ՝ արդյունքում նպաստելով պարտքի բեռի որոշակի նվազեցմանը: Այսպես, 2022 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը կառաջնորդվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծախսային կանոնների պահպանմամբ, այդ թվում՝ կապիտալ ծախսերի ավելացման և ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպի սահմանափակման ճանապարհով: Վերջինս նպատակադրելով երկարաժամկետ տնտեսական ներուժի ավելացումը՝ միաժամանակ հիմնականում չեզոք ազդեցություն կունենա ընթացիկ պահանջարկի միջավայրի վրա:

Տնտեսության վերականգնման և հարկային վարչարարության շարունակական բարելավման, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների իրականացման արդյունքում, 2022 թվականին ակնկալվում է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի էական՝ 0.9 տոկոսային կետ աճ, ինչը կկազմի ՀՆԱ-ի 23.4 տոկոսը: Արդյունքում, ՀՀ պետական բյուջեի եկամուտները համախառն պահանջարկի վրա կունենան զսպող ազդեցություն:

2022 թվականի պետական ծախսային քաղաքականությունն ուղղված կլինի տնտեսական աճի խթանմանը՝ թիրախավորելով պետական ներդրումների մասնաբաժնի էական ավելացումը և ծախսերի արդյունավետ կառավարումը՝ միաժամանակ վերադարձ կատարելով սահմանված հարկաբյուջետային կանոններին: Մասնավորապես, ընդհանուր պետական ծախսերում նախատեսված կապիտալ ծախսերի մասնաբաժնի մեծացման արդյունքում կապիտալ ծախսերի ծավալը կգերազանցի պետական բյուջեի պակասուրդի մեծությունը: Մինչդեռ ընթացիկ ծախսերի մակարդակը, հարկաբյուջետային կանոններին համապատասխան, կհավասարվի հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությանը: Արդյունքում պետական բյուջեի ծախսերը 2021 թվականի նկատմամբ ՀՆԱ-ում կնվազեն 0.3 տոկոսային կետով, որտեղ ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կնվազի 1.6 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերը ՀՆԱ-ում կաճեն 1.2 տոկոսային կետով և կկազմեն 4.5%: Հաշվի առնելով վերջին տարիների փորձը, և փաստելով, որ կապիտալ ծախսերը 2022 թվականի համար նախանշված տնտեսական աճի հիմնական հենասյուներից են ու միաժամանակ երկարաժամկետ կայուն տնտեսական աճի երաշխիք, կարևոր ենք համարում կապիտալ ներդրումների ծրագրված ցուցանիշների կատարողականի ապահովումը և արդյունավետության բարձրացումը:

Այսպիսով, հարկերի զսպող և ծախսերի ընդլայնող ազդեցություններով պայմանավորված չեզոք հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում, 2022թ-ին նախանշվում է պետական բյուջեի պակասուրդի կրճատում ՀՆԱ-ում 1.6 տոկոսային կետով (կկազմի 3.1%) և կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի

նվազեցում՝ 0.7 տոկոսային կետով (կկազմի 60.2%): Հարկ է նշել, որ պետական բյուջեի պակասուրդի և հատկապես կապիտալ ծախսերի ֆինանսավորման տեսանկյունից դիտարկվում է արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավումը, ինչպես նաև ազգային արժույթով պարտքի և ներքին պարտքի աստիճանական ավելացումը: Շեշտադրելով միջնաժամկետ հատվածում պարտքի և հարկաբյուջետային կայունության համար անհրաժեշտ երաշխիքների ապահովումը՝ նախանշված սահուն կոնսոլիդացիայի պայմաններում կարևորում ենք կապիտալ ծախսերի ավելացման միջոցով երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար կայուն հիմքերի ձևավորումը: Նման պայմաններում հատկանշական է, որ պետական և մասնավոր ներդրումների խթանման վրա հենված տնտեսական աճի նախանշվող ռազմավարության հավանական շրջադարձելիության դեպքում կարող են էական ռիսկեր առաջանալ պարտքի միջնաժամկետ կայունության տեսանկյունից:

Միաժամանակ հարկ է փաստել, որ 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրում դիտարկվել են դրա հիմքում դրված հիմնական ենթադրություններից և կանխատեսումներից հնարավոր շեղումների հետ կապված ռիսկերն ու անորոշությունները, գնահատվել են դրանց ի հայտ գալու պարագայում բյուջեի հոսքերի և հարկաբյուջետային քաղաքականության շրջանակի ճշգրտման ուղղությունները:

Ամփոփելով՝ գնահատվում է, որ 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով նախանշված սահուն կոնսոլիդացման վարքագիծը և սահմանված հարկաբյուջետային կանոնների պահպանումը կնպաստեն ՀՀ պետական պարտքի բեռի նվազեցմանը և մակրոտնտեսական կայունության ապահովմանը: Միևնույն ժամանակ, շեշտադրելով բյուջեի ծախսերի կառուցվածքի ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հարկային քաղաքականության բարեփոխումները, քննարկվող նախագծով նախատեսված միջոցառումները բարենպաստ պայմաններ կստեղծեն ՀՆԱ ներուժային մակարդակի բարձրացման և երկարաժամկետ կայուն աճի ապահովման համար: